*...ինստիտուտներն ու կենտրոնները, ըստ ՄԱԿ-ի փորձագետների, պետք է անցնեն փարբեր բուհերի ենթակայության տակ, մի մասն էլ ընդհանրապես փակվեն: Բացի այդ, մեկ այլ թերթի հրապարակման համաձայն, «որոշվել է ԳԱԱ շենքը վաճառել ռուսաստանյան մի առեւտրային կազմակերպության»:*

# ՄԱԿ-Ի ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՍԵՑՎԵԼ Է

## Պնդում է ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարը

Ինչպիսին է ԳԱԱ նախագահության արձագանքը, ինչպե՞ս են գիտության ոլորտի պատասխանատուները գնահատում ՄԱԿ-ի նախագիծը, որքանո՞վ է հավանական ակադեմիայի շենքի վաճառքը: Այս հարցերի պատասխաններն ստանալու նպատակով երեկ դիմեցինք ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ԿԳ նախկին նախարար ԷԴՈՒԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ:

Անդրադառնալով շենքի վաճառքի վերաբերյալ շրջանառվող լուրերին՝ ակադեմիկոսը նշեց, որ ակադեմիայի ղեկավարությունը անհանգստանալու կարիք չունի. *«Դա անհեթեթություն է, նման բան բացառվում է, քանի որ «Գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում ֆիքսված է այն դրույթը, ըստ որի, ազատ, չօգտագործվող տարածքներ առաջանալու դեպքում այդ տարածքները տնօրինում է ԳԱԱ-ն: Այսինքն՝ այդպիսի հարցեր՝ շենքի բռնագրավում կամ այլ ունեցվածք չկան, չեն կարող լինել, եւ մենք այդ առումով անհանգստանալու հիմք չունենք»:*

Ըստ մեր զրուցակցի, ակադեմիայի շուրջ 2,5 հազարանոց գիտնականների բանակին բնավ չի անհանգստացնում նաեւ ՄԱԿ-ի փորձագիտական խմբի մշակած նախագիծը, մանավանդ որ *«այդ նախագիծը արդեն կասեցված եւ սառեցված է»:* Էդ. Ղազարյանը նշեց, որ ինքը ծանոթացել է ՄԱԿ-ի նախագծին դեռեւս դեկտեմբերի սկզբին, երբ այդ փաստաթուղթը ուղարկել էին իրեն եւ հրավիրել քննարկման: Ընդ որում, ՄԱԿ-ի նախագծի մշակմանը չեն մասնակցել ակադեմիական եւ բուհական գիտնականներ, իսկ դրա հեղինակներին՝ 4 փորձագետներին, ակադեմիկոսը անձամբ չի ճանաչում: Ինչեւէ:

*«Ծանոթանալով այդ նախագծին, հանգեցինք այն եզրակացության, որ սա մի արեւմտյան մոդել է. երեւի հեղինակներից մեկ-երկուսը անգլերեն լավ գիտեն եւ թարգմանել են ուղղակի»,-* նկատեց Էդ. Ղազարյանը, ավելացնելով, որ ԳԱԱ-ն կտրականապես դեմ է արտահայտվել ՄԱԿ-ի նախագծում տեղ գտած բոլոր առաջարկներին: Սույն նախագծով ոչ միայն ԳԱԱ-ն վերածվում է հասարակական կազմակերպության, այլեւ ընդհանրապես վերացվում է բարձրագույն որակավորման հանձնաժողովը:

Նման մի փորձ էլ արվեց 90-ականների սկզբին, երբ գիտական աստիճաններ սկսեցին շնորհել բուհերը, եւ պրոֆեսորների ու դոկտորների կտրուկ աճ արձանագրվեց: Նա նկատեց նաեւ, որ ՄԱԿ-ի փորձագետները առաջնորդվել են Բոլոնիայի համաձայնագրով, մինչդեռ մենք գտնվում ենք ԱՊՀ գիտակրթական տարածքում: Փաստորեն այդպիսով վերացվում է նաեւ երկաստիճան գիտական համակարգը (գիտությունների թեկնածու, դոկտոր), ինչը այսօր մերժում է, օրինակ, Ռուսաստանը:

Ակադեմիկոս-քարտուղարին զարմացրել է այն փաստը, որ նման նախագիծ մշակում է ոչ թե ... Այն կոչվում է «Գիտության ոլորտի պետական քաղաքականության հայեցակարգ»: Քաղաքականությունը պետությունն է մշակում, ոչ թե առանձին խմբեր կամ միջազգային կազմակերպություններ»:

Ինչեւէ, ծանոթանալով ՄԱԿ-ի նախագծին, ԳԱԱ-ն եւ անակնկալի է եկել, սակայն դիմել է համապատասխան կազմակերպություններին եւ, ըստ Էդ. Ղազարյանի, *«իշխանությունները համարժեք քայլեր ձեռնարկեցին»:* Այսինքն՝ շատ կարճ ժամանակ անց կրկին զանգահարել են իրեն, եւ ՄԱԿ-ի ներկայացուցիչը ներողություն է խնդրել ու հայտնել, որ *«նախագիծը անորոշ ժամանակով քննարկումից հանվել է»:*



Ըստ ակադեմիկոսի, ԳԱԱ նախագահությունը ՄԱԿ-ից ոչ պակաս լրջությամբ է գիտակցում, որ համակարգը բարեփոխելու անհրաժեշտություն կա, եւ արդեն ձեռնամուխ են եղել գիտության ոլորտի բարեփոխումների ծրագրի եւ հայեցակարգի մշակմանը: ... Այնպես որ 2006-ը ամբողջությամբ լինելու է բարեփոխումների տարի: Հիմնարար գիտություն, բարձր տեխնոլոգիաներ, արտադրություն եւ շուկա. այս ամբողջական շղթան ձեւավորելու համար դեռ ժամանակ է պետք:

Իսկ հետաքրքիր է, կոնկրետ 2005-ին ԳԱԱ-ի երեք բաժանմունքներում քանի՞ հայտնագործություններ են արձանագրվել: Պարզվեց՝ դեռ անցած տարվա արդյունքները ամփոփված չեն: Միայն մարտ ամսին կհասցնեն ամփոփել եւ հանրությանը տեղյակ պահել: Սակայն, ըստ Էդ. Ղազարյանի, 2005-ին գիտական կոնֆերանսների առատությունը գերազանցել է նույնիսկ խորհրդային տարիների ցուցանիշը: Հրատարակվել են մենագրություններ, վերջապես ԳԱԱ-ն ունեցավ իր ամսագիրը:

*Ամբողջ մեկ տարվա գիտական մտքի արդյունքն առայժմ սա է:*

*ԿԻՄԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

*Դատելով ամենից, Հա-*